Կարոյին ես ճանաչում էի այն ժամանակ, երբ նա մի լուռ, մտախոհ, միեւնոյն ժամանակ դէպի ամէն վատութիւն ոխերիմ պատանի էր: Երբ նա մեր դպրոցից անյայտացաւ, այնուհետեւ նրա մասին ոչինչ չգիտէի, թէ ո՞ւր գնաց նա, ինչո՞վ էր պարապում այնքան ժամանակ եւ ի՞նչ առիթով կրկին վերադարձաւ: Միայն հասարակական կարծիքը նրա մասին լաւ չէր խօսում. նրան համարում էին մի համարձակ սրիկայ եւ աւելի ոչինչ:

Բայց մի մարդ, որ միշտ անբախտի եւ թշուառի բարօրութեան համար էր մտածում, մի մարդ, որ աշխատում էր նեղեալի հանգստութեան համար, կարո՞ղ էր սրիկայ լինել:

Ներքին ձայնը պատասխանում էր՝ ոչ:

Իսկ միեւնոյն ժամանակ Կարոյի անսահման բարեմտութեան հետ խառն նկատւում էին արարմունքներ, որոնք բարի մարդու գործեր չէին: Մարոի յայտնած գաղտնիքը «քանդուած մատուռի» մօտ, Ղանլի-դարայի մէջ, այն նոիրական ծառերի հովանու տակ, — թէ որպէս Կարօն սպանել էր իր ընկերներից մէկին, մի հնդկացի երիտասարդի, ամենափոքր կասկածանքի պատճառով, — այս սարսափելի եղեռնագործութիւնը ես տակաւին մոռացել չէի: Իսկ այժմ իր նամակի մէջ նա ծերունի որսորդին առաջարկում էր մի ուրիշ չարագործութիւն՝ «հանգստացնել» Հոգոոց վանքի վարդապետին, կտրել մի օծեալ գլուխ, եւ կիսախելագար Մըհէն պէտք է կատարէր դահճի պաշտօնը:

Բայց կմասնակցէ՞ ծերունի որսորդը մի այսպիսի արիւնոտ գործին, մտածում էի ես:

Ներս մտաւ Մարօն ծիծաղելով, նա ձեռքը սեղմել էր իր կուրծքի վրայ, կարծես աշխատում էր պահել իր ծիծաղը, թեքթեքւում էր, ուզում էր խօսել, բայց դարձեալ զսպել իր ծիծաղը չէր կարողանում. այնպէս ծիծաղելով ընկաւ օթոցի վրայ, համարեա թէ մարեցաւ:

— Ի՞նչ է պատահել, — հարցրի ես:

Նա չկարողացաւ պատասխանել:

Յանկարծ դռները, շառաչմամբ ետ գնացին, լսելի եղաւ Մըհէի ձայնը.

— Ո՞ր սատանան տարաւ իմ տրեխները:

Վիթխարի կերպարանքը յայտնուեցաւ սենեակի մէջ, որպէս մարմնացած կատաղութիւն: Նա իր ձեռքում բռնած ունէր մի ահագին լախտ, որի գնդաձեւ գլխի վրայ մեխել էր իր կեանքի մէջ գտած բոլոր բեւեռները: